ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

3 օգոստոսի հինգշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

113
(2779)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԴԱՏԱԽԱԶՆԵՐԸ ՉԵՆ ԼՌԵԼՈՒ

ՀՀ Կոտայքի եւ Արմավիրի մարզերի դատախազները չեն պատրաստվում լռել: «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ դատախազները դիմելու են Մարդու իրավունքների եվրոպական դատարան:

ArmLur.am-ը գրել էր, որ ՀՀ գլխավոր դատախազությունը գաղտնալսել է մարզի դատախազներին, որի արդյունքում աշխատանքից ազատեց Արմավիրի մարզի դատախազ Աշոտ Մարտիրոսյանին եւ Կոտայքի մարզի դատախազ Ապրես Գրիգորյանին:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ ուժային կառույցները Հայաստանում աշխատում են գաղտնալսման պայմաններում: Իսկ ի՞նչ են լսել իրավապահները երկու դատախազներին գաղտնալսելիս: Արմավիրի դատախազ Աշոտ Մարտիրոսյանին եւ Կոտայքի դատախազ Ապրես Գրիգորյանին լսելիս պարզել են, որ դատախազները նեղսրտած խոսել են, քննադատել ու տարբեր կարծիքներ արտահայտել Արմավիրի դատախազ Վահան Սարգսյանի եւ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանի մասին:

Այս ներքին քննարկումն էլ ճակատագրական է դարձել երկու դատախազների համար, ու նրանց լիազորությունները գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը դադարեցրել է ու սկսել ծառայողական քննություն: Սակայն այսքանով Դատախազությունում «վիուկների որսն» ու ներքին պառակտումները չեն ավարտվել: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ անգամ ԱԱԾ-ն այս գաղտնալսման արդյունքում մտել է Կոտայքի ու Արմավիրի մարզերի դատախազություն, դատախազներին պառկեցրել գետնին ու սկսել գործողություններ: Այստեղ էլ հասունացել է դրամայի երկրորդ մասը. Արմավիրի մարզի դատախազ Վահան Սարգսյանի գործելաոճը դատախազների մոտ սկսել է քննարկվել Սերժ Սարգսյանի գործը քննող դատախազ Արսեն Մարտիրոսյանի, Ռոբերտ Քոչարյանի գործը քննող դատախազ Պետրոս Պետրոսյանի հետ ունեցած խոսակցությունների ժամանակ: Նրանք ոչ այդքան հաճելի կարծիքներ են արտահայտել Արմավիրի մարզի դատախազ Վահան Սարգսյանի, ինչպես նաեւ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանի մասին: Այսպիսով, դատախազները ներքին միջանձնային խոսակցության համար ազատվել են աշխատանքից:

Այլ կերպ ասած, Հայաստանը վերածվել է գաղտնալսումների երկրի, որտեղ քաղաքական իշխանությանը ընդդիմացողների խոսքի ազատությունը ոտնահարվում է. անգամ գաղտնի չեն կարող խոսել դատախազները:



«Ժողովուրդ» օրաթերթը պաշտոնական աղբյուրներից տեղեկացավ, որ քրեական ենթամշակույթի դեմ պայքարող հեղափոխական իշխանությունները վերջերս կալանքից ազատել են մի քանի «օրենքով գողերի», որպեսզի նրանք Երեւանի ավագանու ընտրություններում ՔՊ-ի համար աշխատեն: Քրեական աստիճանակարգով ամենաբարձր տիտղոսն ունեցող «օրենքով գողերի» մեջ, սակայն, ներքին անհասկացվածություն կա այս թեմայով: Երբ 2018 թվականին Հյուսիսային պողոտայում վիճաբանություն էր եղել նրանց մեծ խմբի միջեւ, քրեական աստիճանակարգում բարձր տեղ զբաղեցնողները միմյանց խոստացել են, որ այլեւս քաղաքական որեւէ գործընթացի, որեւէ ընտրության չեն մասնակցի: Եւ հիմա «գողականների աշխարհում» քննարկումներ են. եթե պետք է կանգնել որեւէ թեկնածուի կողքին, սատարել որեւէ մեկին, նա չի կարող լինել իշխանության թիմից: Ճիշտ կլինի, որպես միակ իսկական երեւանցի տղա, քննարկել Վիկտոր Մնացականյանին սատարելու հարցը, որը ամենաապաքաղաքական թեկնածուն է, որեւէ կուսակցության հետ չի ասոցացվում, միայն մայրաքաղաքի խնդիրներից է խոսում: Բայց դեռ վերջնական որոշման չեն հանգել այդ աշխարհում, թե որն է ճիշտը: Հավելենք, որ կալանքից ազատված եւ տնային կալանքի ռեժիմում գտնվող «օրենքով գողերից» մեկը Սուրեն Ավետիսյանն է՝ լենինականցի Սուրոն, մյուսը՝ Արտյոմ Ղազարյանը՝ «օրենքով գող» Ջապի քրոջ որդին, եւ էլի 2-3 «օրենքով գողեր», որոնց անունները ճշտվում են:

2023 թվականի հուլիսի 1-ից 31-ը ՀՀ Ազգային ժողովի 2023թ. կարիքների համար պատվիրակությունների ընդունման եւ արտասահմանյան այցելությունների կազմակերպման համար կոնյակների են ձեռք բերել խորհրդարանում՝ վճարելով 3 մլն 872 հազար դրամ: Գնումը կատարված է «Վինո Վինո» ՍՊԸ-ից, որի սեփականատեր Տիգրան Համասյանը Պեռնո Ռիկարի հետ կապ ունի: Նկատենք, որ ապրիլին նույն կազմակերպությունից գնվել են 10 մլն 752 հազար դրամ ընդհանուր արժեքով կոնյակներ: Նույն թվականի հունիսի 1-ից 30-ը ընկած հատվածում Ազգային ժողովը պաշտոնական պատվիրակությունների ընդունելության եւ արտասահմանյան այցելությունների կազմակերպման համար նաեւ օղիների է ձեռք բերել՝ մոտ մեկ միլիոն դրամ՝ 959 հազար վճարելով «Նոաս Օրչարդս Դիսթիլինգ Քոմփանի» ՍՊԸ-ին: Այսինքն՝ այն մեղադրանքները, որոնք Նիկոլ Փաշինյանն ու իր թիմակիցները հնչեցնում էին նախկինների եւ պետական տարբեր կառույցների հասցեին, որ մսխում են պետական բյուջեն, անարդյունավետ ճոխ ծախսեր են արվում, բնորոշ են նաեւ իրենց:

Այսօրվանից մեկնարկում է աշնանը սպասվող ավագանու ընտրություններին մասնակցող կուսակցությունների եւ կուսակցությունների դաշինքների առաջադրման պաշտոնական գործընթացը, որը կտեւի 10 օր, կավարտվի օգոստոսի 13-ին: Ավագանու ընտրություններին մասնակցել ցանկացող քաղաքական ուժերը եւ դաշինքները 10-օրյա ժամկետում ԿԸՀ պետք է ներկայացնեն գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը: Օգոստոսի 23-ից էլ արդեն կմեկնարկի նախընտրական քարոզարշավը. Երեւանը կհեղեղվի նախընտրական պաստառներով, իսկ քաղաքապետի թեկնածուները երեւանցիներին վերամբարձ խոստումներ կտան ու «սեր կխոստովանեն»: Նախընտրական քարոզարշավը կավարտվի սեպտեմբերի 15-ին: Նշենք, որ դեռ ոչ բոլոր ուժերն են հաստատել իրենց մասնակցությունը ավագանու ընտրություններին:

ԶՐՈՒՅՑ

ՄԵՏԱՔՍԵ ՀԱԿՈԲՅԱՆԸ՝ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթը Արցախում ստեղծված հումանիտար ճգնաժամի վերաբերյալ զրուցել է Արցախի Ազգային ժողովի պատգամավոր Մեսաքսե Հակոբյանի հետ:

-Ի՞նչ իրավիճակ է այժմ Արցախում, տիկին Հակոբյան:

-Իրավիճակը ընդհանուր առմամբ պարզապես հնարավոր չէ հստակ ներկայացնել, քանի որ շատ արագ փոփոխություն է տեղի ունենում եւ դեպի վատը: Ընդամենը րոպեների ընթացքում տեղի են ունենում անասելի փոփոխություններ: Կոնկրետ հումանիտար առումով, ես չգիտեմ, սրանից ծանր էլ ինչ պիտի լինի: Արդեն կան ընտանիքներ, որոնցից մեկը նաեւ իմ ընտանիքն է, որոնք հաց գնել են երկու օր առաջ: Այսինքն՝ մենք ամենաքիչը հացի խնդիր ունենք՝ կապված վառելիքի հետ, եղանակային պայմանների հետ. ցորենը չի հասցրել չորանա: Բավական մեծ թվով արտադրամասեր փակվել են ալյուր չունենալու պատճառով: Կոնկրետ այն փողոցը, որտեղ ես եմ ապրում, այստեղ հացի ընդամենը մեկ արտադրամաս կա, որը երեկ երեկոյան արդեն չէր աշխատում: Փաստորեն, մի ամբողջ մեծ թաղամաս հաց գնելու հնարավորություն արդեն չունի: Մնացած ապրանքների մասին խոսելն արդեն անիմաստ է, եւ չենք էլ խոսում, որովհետեւ պարզապես չկա: Չկա կաթնամթերք, բանջարեղեն կարելի է հանդիպել հազվադեպ, այն էլ՝ շատ բարձր գնով՝ կապված եղանակային պայմանների եւ մի շարք այլ խնդիրների հետ: Բնակչության մեծ մասը դա ձեռք բերել պարզապես ի զորու չէ: Մենք անհասկանալի ձեւով դեռեւս գոյատեւում ենք: Կարծում եմ՝ սա նաեւ փոխօգության գործոնի առկայությունն է: Ցավոք, ես ինքս ականատես եմ եղել, որ մարդիկ մեկ հացը բաժանել են երկու եվ ավելի անձանց միջեւ, պարզապես որպեսզի երեխաները ունենան հնարավորություն տանը մի կտոր հաց ուտելու: Առողջապահությունը ամենավատ վիճակում է գտնվում: Դեղատների մեծ մասն արդեն իսկ դատարկ է:

Առաջին անհրաժեշտության դեղորայքը՝ հակաբորբոքայիններ, ջերմիջեցնողներ եւ այլն, ուղղակի բացակայում են, չկան:

-Տիկին Հակոբյան, իսկ հումանիտար բեռների մասին ի՞նչ կասեք, որոնք ուղարկվել են Արցախ. ադրբեջանական կողմը չի թողնում՝ Կոռնիձորից առաջ անցնեն բեռները:

-Մենք քանի որ ֆիզիկապես այդ ամենը տեսնելու հնարավորություն չունենք, մենք էլ ենք մամուլից տեղեկանում, թե ինչ է կատարվում, եւ որ այսօր եւս երկու մեքենա է միացել շարասյանը, բայց տեսնելով Ադրբեջանի դիրքորոշումը՝ հասկանալի է դառնում, որ նրանք, միեւնույնն է, չեն թողնելու, որ այս ամենը մուտք գործի Արցախ:

-Տիկին Հակոբյան, ադրբեջանական կողմը արդեն երկրորդ անգամ քաղաքացու է առեւանգում:

-Այդ ուղղությամբ առավել ակտիվ աշխատում է Մարդու իրավունքների պաշտպանը, որի հետ ես անընդհատ կապի մեջ եմ. ահռելի աշխատանք է կատարում եւ անընդհատ կապի մեջ է թե՛ միջազգային կառույցների հետ եւ թե՛ հայաստանյան շահագրգիռ կազմակերպությունների հետ, ինչպես նաեւ, իր իսկ հավաստմամբ, Հայաստանի Հանրապետությունում մարդու իրավունքների պաշտպանի հետ: Երեկ ես կոնկրետ մի հարցադրումով եմ խոսել իր հետ. արդյոք վստա՞հ են, որ Վագիֆ Խաչատրյանը կենդանի է: Ինձ մոտ առաջին հարցը, որ առաջացել է, եղել է՝ կապված այն հանգամանքով, որ այն ախտորոշումը, որը տրված էր նրան, բավականին լուրջ էր, եւ այդ ամենը մինչեւ Բաքու է հասել:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ

«Սյունիքի մարզպետ պարոն Ռոբերտ Ղուկասյանի հետ քննարկեցինք Ֆրանսիայի հետ տնտեսական, մշակութային, առողջապահական ոլորտներում, ինչպես նաեւ Հայաստանի տարածքի՝ռազմավարական կարեւորություն ունեցող այս մարզի հետ ապակենտրոնացված համագործակցության հեռանկարները»,- «Թվիթեր»-ի իր միկրոբլոգում գրել է Օլիվիե Դըկոտինյին:

ԿԱՅԱՑԵԼ Է

Առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանի գլխավորությամբ կայացել է Առողջապահության եւ աշխատանքի տեսչական մարմնի խորհրդի արտահերթ նիստը. հայտնում են ԱՆ-ից: Օրակարգի գլխավոր հարցը տեսչական մարմնի խորհրդի ղեկավարի թեկնածության առաջադրումն էր: Խորհուրդը ներկայացրել է Սլավիկ Սարգսյանի թեկնածությունը, որը տեսչական մարմնի ղեկավարի տեղակալն էր եւ 2022 թվականի նոյեմբերից ղեկավարի պաշտոնակատարը: 6 ամսվա աշխատանքների մասին Սլավիկ Սարգսյանի ամփոփ հաշվետվությունը լսելուց հետո, նրա բացակայությամբ, նորից մանրամասն քննարկվել է նրա թեկնածությունը, որից հետո խորհուրդը միաձայն որոշում է կայացրել վարչապետին ներկայացնել Սլավիկ Սարգսյանի՝ Առողջապահության եւ աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարի պաշտոնում նշանակվելու թեկնածությունը:

ՎԻՃԱԿԸ՝ ԱՊԱՍՏԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Երեւանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում բնակիչների մեծ մասն անգամ իրազեկված չեն՝ օդային տագնապի դեպքում որտեղ պետք է ապաստանեն. ասում են, որ շենքերի մուտքերի մոտ թռուցիկների չեն հանդիպել, որպեսզի տեղեկանան՝ որտեղ պետք է պատսպարվեն վտանգի դեպքում:

Բնակիչները ենթադրում են, որ, որպես ապաստարան, պետք է օգտագործվեն շենքերի նկուղները:

«Ժողովուրդ» օրաթերթը եղել է Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի մի քանի շենքերում եւ արձանագրել, որ շենքերի նկուղներն ամխիթար վիճակում են:

Նախ՝ դրանք կողպված են, իսկ ներսում աղբ է, լուսավորություն չկա, ուստի անհնար է պատկերացնել, թե ինչպես դրանք կարող են որպես ապաստարան օգտագործվել:

Հետաքրքիր է՝ ինչով են զբաղված քաղաքային իշխանությունները, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավար Արման Բարխուդարյանը, որ չեն կարողանում անգամ բնակիչների անվտանգությունն ապահովել. պատերազմական վիճակում գտնվող մեր երկրում ապաստարանները կարգի չեն բերում ու բնակիչներին պատշաճ ձեւով չեն իրազեկում անվտանգության կանոնները:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց նաեւ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավար Արման Բարխուդարյանի հետ, որպեսզի պարզի՝ ինչու այս հարցերով չեն զբաղվում: Վերջինս հայտնեց, որ վարչական շրջանում պարբերաբար տեղեկատվական թռուցիկներ փակցվում են, սակայն դրանք հաճախ պոկվում են:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՏՎՅԱԼՆԵՐ

ՔՊ-ԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Արուսյակ Ջուլհակյանը Ազգային ժողովի 8-րդ գումարման խորհրդարանի պատգամավոր է ընտրվել 2021 հունիսի 20-ին:

Ըստ պատգամավորի հայտարարագրի՝նրա հետ համատեղ բնակվող անձինք նրա ծնողներն են, իսկ ամուսինն այդ հայտարարագրում չկա: Նա չի հայտարարագրել որեւէ անշարժ գույք եւ տրանսպորտային միջոց, սակայն Ջուլհակյանը վատ ֆինանսական միջոցներ չի հայտարարագրել:

Նրա պարտքային եւ այլ արժեթղթերը կազմել են 10 մլն եւ 10 հազար դոլար, հանձնված եւ վերադարձված փոխառությունները կազմել են 22 մլն 715 հազար դրամ, որից 19 մլն 114 հազար դրամը բնակարանի հիպոտեկի մնացորդ գումարն է: Բանկային հաշիվների մնացորդները տարեվերջին կազմել են 7 մլն 026 հազար դրամ եւ 330 դոլար, իսկ կանխիկ դրամները՝ 9 հազար դոլար: Հաշվետու տարվա եկամուտները կազմել են 9 մլն 765 հազար դրամ, որից 7 մլն 998 հազար դրամը աշխատանքի վարձատրություն է Ազգային Ժողովի աշխատակազմից:

Պատգամավորի հետ համատեղ բնակվող հայրը՝ Թովմաս Ջուլհակյանը, որպես դասախոս աշխատում է Ճարտարապետության եւ շինարարության Հայաստանի ազգային համալսարանում: Համալսարանից նա ստանում է տարեկան 1 մլն 457 հազար դրամ աշխատանքի վարձատրություն, իսկ որպես կենսաթոշակ՝ 960 հազար դրամ: Իսկ նրա հետ համատեղ բնակվող Մարիետտա Պողոսյանը նույն համալսարանում աշխատում է որպես լաբորատորիայի վարիչ: Աշխատանքի վարձատրության դիմաց նա ստանում է 958 հազար դրամ, իսկ որպես կենսաթոշակ՝ 780 հազար դրամ: Պետրոսյանը հայտարարագրել է բնակարան Նոր Նորք վարչական շրջանում, որը գնվել է 1994 թվականին:

Ըստ Ջուլհակյանի՝ մեծամասնական ընտրակարգը չարիք է: «Այն կարված էր «Հանրապետական» իշխանության համար եւ կարված էր նրանց իշխանությունը հավերժացնելու համար: Սա «տասովչիկների» ընտրական համակարգ է, եւ այս չարիքն օր առաջ պետք է մեզ մոտ չեղարկվի». այս հայտարարությամբ 2021 թվականին Ազգային Ժողովում հանդես է եկել Ջուլհակյանը: Առաջիկայում Երեւանի ավագանու ընտրություններն են. տեսնենք՝ հենց այդ ընտրական համակարգն ինչ նոր գործողություններ կծավալի:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՓԱՍՏԵՐ Է ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ

Կարմիր խաչի միջազգային կոմիտեի հովանու ներքո Հայաստան բուժման նպատակով տեղափոխվող 68-ամյա քաղաքացուն Ադրբեջանի կողմից առեւանգելու դեպքի առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանը հուլիսի 29-ից մի շարք քննարկումներ է ունեցել միջազգային գործընկերների եւ տարբեր կառույցների ներկայացուցիչների հետ:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկանում է ՀՀ ՄԻՊ-ի գրասենյակի տարածած հաղորդագրությունից, որ նրանց են ներկայացվել ուսումնասիրությունների արդյունքները, որոնց համաձայն՝ Վագիֆ Խաչատրյանի նկատմամբ միջազգային հետախուզական որեւէ համակարգում առկա չէ վերջինիս հետախուզման վերաբերյալ տվյալ, իսկ անձի հիմնարար իրավունքներին ոչ իրավաչափ միջամտությունը տեղի է ունենում միջազգային իրավական երաշխիքների եւ չափանիշների խախտմամբ:

Համապատասխան նամակներ են ուղարկվել մարդու իրավունքների պաշտպանության մանդատ ունեցող միջազգային հեղինակավոր կառույցներին: Այդ ուղղությամբ միջազգային գործընկերների հետ իրականացվող աշխատանքները շարունակվում են, ձեռք են բերվում նոր տվյալներ:

Անահիտ Մանասյանը հանդիպել է նաեւ առեւանգված քաղաքացու հարազատների հետ, որոնց ներկայացվել են իրականացվող, սակայն հրապարակման ոչ ենթակա աշխատանքների մանրամասները:

Պաշտպանը նշում է, որ Վագիֆ Խաչատրյանը միջազգային մարդասիրական պաշտպանության տակ գտնվող անձ է, ով ԿԽՄԿ հովանու ներքո Հայաստան էր տեղափոխվում բուժում ստանալու նպատակով: Ուստի, վերջինիս առեւանգումն Ադրբեջանի սահմանապահ ծառայողների կողմից միջազգային մարդասիրական իրավունքի կոպիտ խախտում է:

Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրել է դեպքեր, երբ սոցիալական ցանցերում, մասնավորապես՝ տելեգրամյան ալիքներում, ադրբեջանցիների կողմից թիրախավորվել են Վագիֆ Խաչատրյանի հարազատները, այդ թվում՝ անչափահաս, ինչը խիստ անընդունելի եւ դատապարտելի է: Պաշտպանն ընդգծում է, որ այս երեւույթը Ադրբեջանի կողմից վարվող հայատյացության քաղաքականության եւս մեկ ապացույց է:

ԱՌԵՎԱՆԳՈՒՄ

ԱԴՐԲԵՋԱՆՆ ՕԳՏԱԳՈՐԾԵ՞Լ Է ԿԽՄԿ-ԻՆ

ՄԻԵԴ-ում հայ ռազմագերիների շահերի ներկայացուցիչ Սիրանուշ Սահակյանը չի բացառում, որ Ադրբեջանի կողմից արցախցի Վագիֆ Խաչատրյանի առեւանգումը մարդու իրավունքների տեսանկյունից արտակարգ հանձնում է, որը խախտում է անձնական ազատության իրավունքը, տվյալ մարդուն խոշտանգումների վտանգի առաջ է կանգնեցնում, բացառում է արդար դատաքննությունը: Սիրանուշ Սահակյանը չի բացառել նաեւ այն տարբերակը, որ Ադրբեջանն օգտագործել է Կարմիր խաչի միջազգային կազմակերպությանը՝ Վագիֆ Խաչատրյանին առեւանգելու համար:

Այս մասին Սիրանուշ Սահակյանն ասաց օգոստոսի 2-ին լրագրողների հետ հանդիպմանը:

Նրա համոզմամբ՝ միջադեպը դժվար է տեղավորվում միջազգային իրավունքի տրամաբանության մեջ: «Միջազգային իրավունքն, իհարկե, ունի քրեական ոլորտում համագործակցության մեխանիզմներ, որոնք խիստ կարեւոր են ու նպաստում են, որ հանցագործները կանգնեն արդարադատության առաջ, եւ կանխվի նրանց փախուստն արդարադատությունից: Դրա համար միջազգային իրավունքում կան հանձնման, արտահանձնման եւ փոխանցման գործիքներ, որոնց հասցեատեր կարող են լինել պետությունները: Եթե Ադրբեջանը կարծում էր, որ Վագիֆ Խաչատրյանը հանցագործ է, ապա այդ հանցագործին տերիտորիալ յուրիսդիկցիա կարող էր բերել միջազգային քրեական իրավունքի համագործակցության ճանապարհով՝ Արցախի, Հայաստանի իշխանությունների, Ռուսաստանի Դաշնության եւ, ինչու ոչ, Ինտերպոլի հետ համագործակցությամբ»,-նշեց նա եւ հավելեց՝ Ադրբեջանը ոչ արժանահավատ մեկնաբանություն է տվել, որ տվյալ անձը գտնվել է միջազգային հետախուզման մեջ, ինչը հերքվեց նաեւ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից: Սահակյանի խոսքով՝ Ադրբեջանը ոչ թե գնացել է իրավական գործընթացներում համագործակցելու ճանապարհով, այլ, նախապես տեղեկանալով, որ իր կողմից ցանկալի անձ է ճանապարհորդելու, որեւէ ինֆորմացիա չի տրամադրել Կարմիր խաչին եւ Կարմիր խաչի մարդասիրական առաքելության միջոցով արհեստականորեն Վագիֆ Խաչատրյանին Արցախի իշխանության յուրիսդիկցիայից խաբեությամբ բերել է Ադրբեջանի յուրիսդիկցիա, որտեղ արդեն կամայական գործելակերպով ձերբակալել է: Ըստ Սահակյանի՝ երկրորդ տարբերակն այն է, որ ի սկզբանե Ադրբեջանը նման տեղեկատվություն չի տրամադրել Կարմիր խաչին եւ Կարմիր խաչին օգտագործել է իր խնդիրը լուծելու նպատակով: Սահակյանը կարծում է՝ Կարմիր խաչը կարող էր շատ կոշտ արձագանքի դեպքում տեղում միջադեպը կանխել՝ էսկալացնելով խնդիրը մինչեւ բարձր օղակներ, այսինքն՝ միջադեպի վաղ փուլից այդ հարցի մասին պետք է տեղեկանային կենտրոնական մարմինները: «Մենք չունենք պարզաբանում, որ Կարմիր խաչը հենց ձերբակալման վտանգը հասկանալու պահից ձեռնարկել է անհրաժեշտ համալիր բոլոր գործողությունները, որպեսզի միջազգային բարձր օղակների ներգրավվածությամբ, նրանց ճնշման ներքո միջադեպը կանխվեր: Եթե նույնիսկ այդ պահին բացահայտ կամայական են գործել Ադրբեջանի իշխանությունները նաեւ Կարմիր խաչի մանդատի նկատմամբ, Կարմիր խաչը պարտավոր էր ոչ թե փաստերի շուրջ մեկնաբանություն տալ, այլ արձագանքել Կարմիր խաչի գործունեության խոչընդոտների ու Կարմիր խաչի օգտագործման ռիսկերի, վտանգների մասին՝ կոչ անելով ավելի կոշտ գործիքակազմ ունեցող կառույցներին աջակցել Կարմիր խաչի մանդատին եւ ձեռնարկել գործուն քայլեր՝ կանխելու իրենց գործունեության խոչընդոտները»,-վստահեցրեց նա:

Սիրանուշ Սահակյանը ենթադրում է՝ Կարմիր խաչն անընդհատ վախեցած է ադրբեջանական արձագանքներից, եւ Ադրբեջանը տակտիկական նկատառումներով ռիսկեր է ստեղծում, սպառնում է, որ առհասարակ անհնար կդարձնի Կարմիր խաչի գործունեությունն Ադրբեջանում, եւ նրանք գերզգուշավոր դիրքերից են հանդես գալիս, որ ապահովեն իրենց շարունակական գործունեությունն Ադրբեջանում, ինչը, գուցե, արդարացված էր ավելի վաղ փուլում: «Ներկայումս տեսնում ենք, որ Կարմիր խաչը զրկված է խնդիրը լուծելու հնարավորությունից: Կառույցի մարդասիրական գործողությունների լիմիտը սպառվել է. Կարմիր խաչը զրկված է սնունդ մատակարարելուց, ինչի պատճառով մարդիկ սովամահ են լինում, թերսնուցումը մեծ առողջական խնդիրներ է առաջ բերում ու կյանքի անմիջական սպառնալիք դառնում արցախահայության համար»,-շեշտեց ՄԻԵԴ-ում հայ ռազմագերիների շահերի ներկայացուցիչ Սիրանուշ Սահակյանը: Ըստ Սահակյանի՝ Վագիֆ Խաչատրյանի առեւանգումը հեռահար նպատակ է հետապնդում. բացի այն, որ անմեղ քաղաքացիների իրավունքներն ու շահերն է այս պահին անմիջականորեն շոշափում, այլեւ գործողություն է, որը հնազանդության կոչ է Արցախի իշխանություններին: «Շրջափակման պայմաններում մենք հասկանում ենք, որ եթե այդտեղ ֆիզիկական բնաջնջման ռիսկերն արդեն իրագործվում են, որպես փրկօղակ կարող է լինել հարկադիր տեղահանումը, որն ինքնին միջազգային հանցագործություն է, բայց այդ հանցագործության կատարմանը զուգընթաց մենք կարող ենք Լաչինի միջանցքով ուղի ապահովելու ճանապարհով ապահովել որոշ անձանց կյանքը, այսինքն՝ հարկադիր իրենց բնակավայրը լքելու, ինքնությունը փոխելու ճանապարհով արցախցիների մի մասն առնվազն կարող էր Հայաստան տեղափոխվելու ճանապարհով իր հետագա կյանքը կառուցել Հայաստանում կամ աշխարհի այլ հատվածքում: Միջանցքը վերահսկվում է ադրբեջանցիների կողմից, որտեղ մարդասիրական կամ խաղաղապահ առաքելություն իրականացնողները դարձել են անզոր: Ադրբեջանն այդ միջանցքով անցնելու ընթացքում կարող է ձերբակալել եւ կամայական գործողություններ իրականացնել ցանկացած անձի նկատմամբ, այդ թվում՝ այս պահին Արցախում որոշում կայացնող քաղաքական եւ ռազմական ղեկավարության նկատմամբ:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀԱՊԿ-Ը ԿՎԵՐԱԴԱՌՆԱ՞Մ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ

ՀԱՊԿ-ը պատրաստ է վերադառնալ Հայաստանի եւ Ադրբեջանի սահմանին դիտորդական առաքելություն տեղակայելու հարցի քննարկմանը. կազմակերպությունը սպասում է Երեւանի արձագանքին: Այս մասին «РИА Новости»-ին տված հարցազրույցում հայտնել է Ռուսաստանի ԱԳՆ ԱՊՀ երկրների առաջին վարչության տնօրեն Միքայել Աղասանդյանը:

Նրա խոսքով՝ Մոսկվայում համոզված են, որ «համապատասխան որոշումների ընդունումը դրական ազդեցություն կունենա ընդհանուր տարածաշրջանային իրավիճակի վրա»:

«Եվս մեկ անգամ շեշտեմ՝ մենք պատրաստ ենք նման կառուցողական աշխատանքի», - հավելել է պաշտոնյան:

Նա նաեւ նշել է, որ ՀԱՊԿ-ը, ինչպես ցանկացած միջազգային կազմակերպություն, «կախարդական փայտիկ չէ», որով լուծվում է ցանկացած խնդիր:

ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԿԱՅԱՆ՝ ԿԱՊԱՆՈՒՄ

Կապանում բացվել է Հայաստանում ԵՄ դիտորդական առաքելության գործառնական կենտրոն: Բացմանը մասնակցել են Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը, Հայաստանում ԵՄ քաղաքացիական առաքելության ղեկավար Մարկուս Ռիտերը, ղեկավարի տեղակալ Յան Պլեշինդերը:

Ըստ Հայաստանում ԵՄ քաղաքացիական առաքելության ղեկավարի՝ Կապանից հետո մտադիր են բացել կենտրոններ Իջեւանում եւ Եղեգնաձորում:

«Հաշվի առնելով ռազմավարական աշխարհագրական դիրքը՝ Կապանում գտնվող այս կենտրոնը կարեւոր է ԵՄ առաքելության մանդատի տեսանկյունից: Կենտրոնը թույլ կտա, որ Սյունիքում եւ Կապանում անվտանգության իրավիճակի մասին զեկուցենք ավելի կանոնավոր»,-ասել է Ռիտերը:

ԱՆԴՐԱԴԱՐՁ՝ ԻՐԱՎԻՃԱԿԻՆ

ՌԴ ԱԳՆ խոսնակ Մարիա Զախարովան երեկվա ճեպազրույցի ժամանակ անդրադարձել է Հայաստանի կողմից Արցախի Հանրապետություն ուղարկված հումանիտար բեռների խոչընդոտներին:

«Չնայած հումանիտար բեռների տեղափոխումը հայկական կողմից համաձայնեցված չի եղել Ադրբեջանի հետ, ռուս խաղաղապահները ակտիվորեն ներգրավվել են՝ երկու կողմի միջեւ կոնտակտ կայացնելու եւ հարցի լուծման ուղղությամբ»,- նշել է Զախարովան՝ շեշտելով, որ այս թեմայի շրջանակում խաղաղապահներին ուղղված մեղադրանքներն անարդյունավետ են:

«Կոնտակտները կայացած են, եւ կարծում եմ, որ իրենց արդյունքը կտան», - ասել է նա: Հիշեցնենք՝ արդեն մի քանի օր է՝ 400 տոննա հումանիտար բեռով բեռնատարները կանգնած են Կոռնիձորում եւ սպասում են Արցախ մուտքի թույլտվությանը:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ՝ ՊԱՏՐՈՆ ԴԱՎՈՅԻ ՎՐԱ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ուշագրավ իրավիճակ է ստեղծվել գործարար Դավիթ Գալստյանի կալանավորման մասով: Քանն այն է, որ իրավապահ համակարգը ամեն գնով գործարար Դավիթ Գալստյանին՝ Պատրոն Դավոյին, ցանկանում է պահել կալանքի տակ:

Նախ՝հիշեցնենք, որ Դավիթ Գալստյանը ռազմամթերքի ձեռք բերման գործընթացում ենթադրյալ չարաշահումների վերաբերյալ գործերով մեղադրյալի կարգավիճակ ունի ՊՆ նախկին նախարար Դավիթ Տոնոյանի դեմ հարուցված քրեական գործով, որը վերաբերում է 2018 թվականի մատակարարումներին, ինչպես նաեւ ՊՆ նախկին նախարար Սեյրան Օհանյանի եւ ՊՆ նախկին կորպուսի հրամանատար Գրիգորի Խաչատուրովի գործին միացրած դատական գործով, որը արդեն վերաբերում է 2011 թվականի մատակարարումներին:

Արդյունքում 2011 թվականի մատակարարումներին վերաբերող քրեական գործով Դավիթ Գալստյանը այս տարվա հունվարի 31-ից կալանավորվել էր, գործը դատարան ուղարկելուց հետո 1 ամսով կալանքի ժամկետը ապօրինի երկարացվել էր, սակայն արդեն հունիսի 28-ին Հակակոռուպցիոն դատարանը Դավիթ Գալստյանին 40 միլիոն գրավի դիմաց ազատ էր արձակել՝ մերժելով կալանքի ժամկետը մեկ ամսով երկարացնելու վերաբերյալ դատախազության միջնորդությունը:

Եվ, ահա, «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ ՀՀ վերաքննիչ դատարանի դատավոր Կարեն Ամիրյանը նախ առաջին մեկ ամսվա կալանքի երկարաձգման մասով պաշտպանական կողմի ներկայացված բողոքով արձանագրում է, որ Հակակոռուպցիոն դատարանը մեկ ամիս անհիմն է կալանքի տակ պահել Դավիթ Գալստյանին, իսկ, ահա, երեկ արդեն գրավի դեմ դատախազության կողմից ներկայացված բողոքի հիման վրա նույն դատավորը որոշման մեջ նշել է, որ Հակակոռուպցիոն դատարանը, Դավիթ Գալստյանին 40 միլիոն գրավի դիմաց ազատ արձակելով, թույլ է տվել խախտում: Ստացվում է, որ Վերաքննիչ դատարանի նույն դատավորը մեկը մյուսի հետեւից հակասում է իրեն այն պատճառով, որ միգուցե հրահանգ են ստացել ամեն գնով կրկին կալանավորել գործարարին:

Բայց սա դեռ ամենը չէ:

Բանն այն է, որ սույն ապօրինի որոշման կայացման մեջ ներգրավված են եղել նաեւ իրավապահ մարմինները: Այսպես, «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ ԱԱԾ աշխատակիցը, հավանաբար դատախազության պատվերով, կազմում է կեղծ տեղեկանք, ըստ որի՝ իբր, Դավիթ Գալստյանը, հայտնվելով ազատության մեջ, միջոցներ է ձեռնարկում, որպեսզի ներազդի քրեական վարույթով իրեն առաջադրված մեղադրանքի վերաբերյալ ապացուցողական ցուցմունքներ տված անձանց վրա: Մեր ունեցած տեղեկություններով՝ նշված անձինք են ՊՆ ավիացիայի վարչության գլխավոր ինժեներ Վլադիմիր Բաբայանը եւ փորձագետ Արտակ Սուքիասյանը: Սակայն նկատենք, որ այս պատմության մեջ ուշագրավն այն է, որ վերոնշյալ անձինք՝ ՊՆ ավիացիայի վարչության գլխավոր ինժեներ Վլադիմիր Բաբայանը եւ փորձագետ Արտակ Սուքիասյանը, ներգրավված են եւ ցուցմունք են տվել 2018 թվականի մատակարարումների մասով քննվող քրեական գործով, այլ ոչ թե 2011 թվականի մատակարարումների գործով, որով Դավիթ Գալստյանը ապահովել էր ենթադրյալ վնասի փոխհատուցումը ամբողջությամբ: Անգամ 2018թ. մատակարարումների մասով քննվող քրեական գործով նշված 2 անձինք ո՛չ ցուցմունք, ո՛չ էլ վկայություն են տվել Գալստյանի դեմ: Այս դեպքում, փաստորեն, այն աստիճան են իրավապահ մարմինները տարված եղել ամեն գնով կալանքի կեղծ հիմքեր ստեղծելու գործով, որ նույնիսկ շփոթել են գործերը եւ դրանցով անցնող անձանց տվյալները:

Ստացվում է, որ գործարարի դեմ շարունակվում են ապօրինի ճնշումները, որի արդյունքում Դավիթ Գալստյանը պետք է ստիպված շարունակի կրել ապօրինի կալանք:

ՆՈՐ ՓՈՒԼ

ՀԱՆՑԱՆՔԸ ԹԱՔՑՐԵԼ ԵՆ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Գրիգոր Լյովայի Եսայանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2023 թվականի մայիսի 4-ին՝ Գյումրի քաղաքի տանը Գ. Մելքոնյանի կողմից Ա. Ավագյանին սպանելուց՝ ապօրինաբար վերջինիս կյանքից զրկելուց հետո, հիշյալ հանցագործությունը, հանցանք կատարած անձի բացահայտմանը, հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվության եւ պատժի ենթարկելուն խոչընդոտելու նպատակով, առանց նախնական խոստման, պարտակել է հանցագործությունը, աջակցել Գ. Մելքոնյանին:

Այսպիսով, Գ. Եսայանին մեղսագրվում է ՀՀ քրեական 474-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքի կատարում:

«ՀԱՄՄԵՐԻ» «ԱՆՈՐՍԱԼԻ» ՎԱՐՈՐԴԻ ԳՈՐԾԸ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ «Համմերի» «անորսալի» վարորդի գործով ավարտական փուլ է հայտարարվել, եւ գործն առաջիկայում կուղարկվի դատարան:

Հիշեցնենք, որ 2023թ. փետրվարի 11-ին Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական առաջին բաժին հաղորդում էր ստացվել այն մասին, որ փետրվարի 10-ին՝ ժամը 23:30-ի սահմաններում, Հանրապետության հրապարակում Պարեկային ծառայության ծառայողներին է մոտեցել «Համմեր» մակնիշի ավտոմեքենա, որի վարորդը մեքենան լիցքավորելու համար գումար է պահանջել պարեկներից:

Մերժում ստանալուց հետո, բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսեւորելով հասարակության նկատմամբ, նա մեքենան վարել է Աբովյան փողոցով՝ երթեւեկությանը հանդիպակաց, չի ենթարկվել ոստիկանության ծառայողների՝ «կանգ առ» ազդանշանին, մեքենան շարունակել է վարել Արամի, Փ. Բյուզանդի, Վ. Սարգսյանի, Ագանթագեղոսի, Տիգրան Մեծի, Ամիրյան փողոցներով, այդ թվում նաեւ՝ հետիոտնի համար նախատեսված վայրով՝ դիտավորյալ վնասելով փողոցներում կայանված թվով 8 քաղաքացիական մեքենաներ:

Այնուհետեւ նա երթեւեկել է ՀՀ կառավարության վարչական շենքի հանդիպակաց՝ ոչ երթեւեկելի հատվածով, որտեղ, շարունակելով չենթարկվել պարեկային ծառայության օրինական պահանջին, վրաերթի է ենթարկել Պարեկային ծառայության աշխատակցին, դիտավորյալ վնասել Պարեկային ծառայության թվով 3 ավտոմեքենա:

Այդ գործողությունները կանխելու համար պարեկային ծառայողներն իրենց ամրակցված ատրճանակներով մոտ տարածությունից մի քանի անգամ կրակել են վերոհիշյալ ավտոմեքենայի անվադողերի ուղղությամբ՝ փորձելով կանգնեցնել այն, սակայն վարորդը շարունակել է երթեւեկությունը, խույս տալով պարեկներից՝ մեքենան թողել է Երեւանի Ագաթանգեղոս 7-րդ շենքի կամարանցման տակ եւ դիմել փախուստի: Վարութային գործողությունների արդյունքում պարզվել էր, որ «Համմեր» մակնիշի ավտոմեքենան պատկանում է Արարատի մարզի բնակիչ Գեղամ Ս.-ին, որը եղել է ենթադրաբար թմրանյութի ազդեցության տակ:

Պարզվել էր, որ տեղյակ լինելով որդու՝ թմրամոլ լինելու մասին՝ հայրն ավտոմեքենայի բանալիները թաքցրել է նրանից, սակայն երիտասարդը փնտրել ու գտել է ավտոմեքենայի պահեստային բանալին, որից հետո ավտոմեքենայով մարզից եկել է Երեւան:

Նախաքննությունը շարունակվում է: Գեղամ Ս.-ն կալանավորված է:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԳԱՂՏՆԱԼՍՈՒՄ

ԱԶԱՏՎԵԼ ԵՆ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Գլխավոր դատախազությունը գաղտնալսման արդյունքում աշխատանքից ազատեց Արմավիրի մարզի դատախազ Աշոտ Մարտիրոսյանին եւ Կոտայքի մարզի դատախազ Ապրես Գրիգորյանին:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ ուժային կառույցները Հայաստանում աշխատում են գաղտնալսման պայմաններում: «Ժողովուրդ» օրաթերթի բացառիկ տեղեկությունների համաձայն՝ գաղտնալսման արդյունքում դատախազներ են ազատվել աշխատանքից, իսկ ոմանց մասով ծառայողական քննություն է սկսվել, որն էլ ունեցավ իր ելքը. նրանց ազատեցին:

Այսպիսով, «Ժողովուրդ» օրաթերթի լուրերի համաձայն՝ Գլխավոր դատախազությունը կասեցրել է Արմավիրի մարզի դատախազ Աշոտ Մարտիրոսյանի եւ Կոտայքի մարզի դատախազ Ապրես Գրիգորյանի լիազորությունները եւ ծառայողական քննություն է սկսել նրանց նկատմամբ: Իսկ ինչո՞ւ: Բանն այն է, որ իրավապահները, գաղտնալսելով Արմավիրի դատախազ Աշոտ Մարտիրոսյանին եւ Կոտայքի դատախազ Ապրես Գրիգորյանին, պարզել են, թե ինչպես են նրանք նեղսրտած խոսում, քննադատում ու տարբեր կարծիքներ արտահայտում Արմավիրի դատախազ Վահան Սարգսյանի կամ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանի մասին:

Այս ներքին քննարկումն էլ ճակատագրական է դարձել երկու դատախազների համար, ու նրանց լիազորությունները գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը դադարեցրել է ու սկսել ծառայողական քննություն:

Այսքանով Դատախազությունում «վիուկների որսն» ու ներքին «խժռոցը» չեն ավարտվել: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ անգամ ԱԱԾ-ն այս գաղտնալսման արդյունքում մտել է Կոտայքի ու Արմավիրի մարզերի Դատախազություն, դատախազներին պառկեցրել գետնին ու սկսել գործողություններ: Այստեղ էլ հասունացել է դրամայի երկրորդ մասը. Արմավիրի մարզի դատախազ Վահան Սարգսյանի գործելաոճը դատախազների մոտ սկսել է քննարկվել Սերժ Սարգսյանի գործը քննող դատախազ Արսեն Մարտիրոսյանի, Ռոբերտ Քոչարյանի գործը քննող դատախազ Պետրոս Պետրոսյանի հետ ունեցած խոսակցությունների ժամանակ: Նրանք ոչ այդքան հաճելի կարծիքներ են արտահայտել Արմավիրի մարզի դատախազ Վահան Սարգսյանի հասցեին, ինչպես նաեւ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանի մասին: Եվ, ահա, այս գաղտնալսումն էլ պատճառ դարձավ, որ օրերս աշխատանքից ազատվեն դատախազներ Արսեն Մարտիրոսյանը,Պետրոս Պետրոսյանը եւ գլխավոր դատախազի տեղակալ Գեւորգ Բաղդասարյանը: Իրավիճակը ցույց է տալիս, որ դատախազները ներքին միջանձնային խոսակցության համար ազատվում են աշխատանքից:

Այլ կերպ ասած, Հայաստանը վերածվել է գաղտնալսումների երկրի, որտեղ քաղաքական իշխանությանը ընդդիմացողների խոսքի ազատությունը ոտնահարվում է:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հուլիսի 31-ից օգոստոսի 1-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 64 դեպք, որոնցից 3-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ՝ ՄԱՐԶՊԵՏԻ ՄՈՏ

Նախկինում գրել եմ, որ Նիկոլ Փաշինյանի դասընկեր, նրա հարսանիքի քավոր, նրա որոշումով 2021թ. ապրիլի 8-ին Տավուշի մարզպետ նշանակված Հայկ Ղալումյանը հուլիսի 27-ին մարզպետարանում ընդունել է 4 քաղաքացիների: Ի սկզբանե մարզպետի աշխատակազմի ֆեյսբուքյան էջում ընդունելության եկած քաղաքացիների թիվը նշված էր 4: Ֆեյսբուքյան գրառումով զարմանք հայտնեցի, որ սահմանամերձ, հոգսաշատ, շուրջ 120 հազար բնակիչ ունեցող Տավուշի մարզից իրեն հուզող հարցի լուծման համար մարզպետ Ղալումյանի հետ հույս է կապել ընդամենը 4 քաղաքացի: Դրանից հետո մարզպետարանը սրբագրեց իր տեղեկատվությունը, մարզպետի մոտ ընդունելության եկածների թիվը սարքեց 6:

ԱՇԽԱՏԱՎԱՐՉ ՉԵՆ ՎՃԱՐԵԼ

Նոյեմբերյան համայնքի սահմանամերձ Ոսկեպար գյուղի միջնակարգ դպրոցի ռազմագիտության ուսուցիչ Նվեր Բեգլարյանը 2020 թվականի 44-օրյա պատերազմի ժամանակ Տավուշի սահմանագոտում դասակ է ղեկավարել, նրա երկու որդիներից Նարեկը կամավոր կերպով մեկնել է Արցախի առաջնագիծ, մարտնչել: Նվեր Բեգլարյանը այս տարվա ապրիլի 19-ից մինչեւ մայիսի 13-ը մասնակցել է ռազմական վարժական հավաքի: Ոսկեպարի միջնակարգ դպրոցի տնօրեն Հարություն Ալավերդյանը Նվեր Բեգլարյանին աշխատավարձ չի վճարել ռազմական վարժական հավաքին մասնակցելու համար՝ հղում անելով օրենքի այն կետին, որ ռազմական վարժական հավաքի մասնակցին աշխատավարձը վճարվում է գործատուի հայեցողությամբ: Հետո օրենքում փոփոխություն է եղել, այժմ ռազմական վարժական հավաքի մասնակցին գործատուի կողմից աշխատավարձ վճարելը պարտադիր է: Ռազմական վարժական հավաքների մասնակիցներին հայտնել են, որ նրանք այդ հավաքն անցկացնելու են Երեւանում՝ Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանի տարածքում, սակայն նրանք հավաքն անցկացրել են Արմավիրի զորավարժարանի տարածքում: Այնտեղ առկա կենցաղային վատ պայմանների պատճառով Նվեր Բեգլարյանը հիվանդացել է, նրա ընտանիքը 100 հազար դրամ է ծախսել Նվեր Բեգլարյանի «ՄՌՏ» բժշկական հետազոտության համար: ՀՀ պաշտպանության նախարարությունը նրան չի փոխհատուցել այդ գումարը՝ պատճառաբանելով, որ նա բժշկական հետազոտություն է անցել վարժական հավաքին մասնակցելուց հետո: Հունիսի 12-ին Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանում կայացած հանդիպման ժամանակ Նվեր Բեգլարյանը իր խնդիրները ներկայացրել է ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետ Էդվարդ Ասրյանին, վերջինս խոստացել է դրանք լուծել, սակայն այդպես էլ չի լուծել: Ն. Բեգլարյանը նամակով դիմել է Է. Ասրյանին, նրանից ստացված պատասխանը մերժողական է: Ն. Բեգլարյանը այդ խնդիրները հուլիսի 27-ին ներկայացրել է օրերս աշխատանքային այցով Ոսկեպար այցելած ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանին. վերջինս գրառել է խնդիրները:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԳՐՈՀ

ՆՈՐ ԳՈՐԾԸՆԹԱՑ ԵՆ ՍԿՍԵԼ

Իրավապահ համակարգը նոր գրոհ է սկսել Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի դեմ. ի՞նչ է սպասվում արբազանին:

Պարզվում է, որ ԱԺ ՔՊ-ական պատգամավորի խնամիները պատերազմ են հայտարարել Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանին: Իսկ ի՞նչ է մտածում այս ամենի շուրջ սրբազանը: Վերջինս «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում հայտնեց, որ ուխտի է ու չի կարող խոսել՝ հորդորելով դիմել փաստաբանին:

Իսկ հիմա ամեն ինչի մասին ամենասկզբից:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը, ամենայն հավանականությամբ, Արարատյան հայրապետական թեմի առաջնորդ, արքեպիսկոպոս Նավասարդ (Սամվել) Կճոյանի գույքի հարցով դիմում կներկայացնի դատարան: Մեզ հետ զրույցում սրբազանի պաշտպան Արմինե Ֆանյանը հայտնեց, որ դատախազությունը Նավասարդ (Սամվել) Կճոյանի գույքի մասով հայցադիմում է ներկայացրել դատարան:

Ինչպես հայտնի է, այս տարվա հունվարի 23-ին Արարատյան հայրապետական թեմի առաջնորդ, արքեպիսկոպոս Նավասարդ (Սամվել) Կճոյանը հրավիրվել էր Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչություն: Կճոյանին պատկանող գույքի առնչությամբ իրականացվում է ուսումնասիրություն, որի արդյունքում կազմվել է ամփոփագիր, ավելին՝ Նավասարդ Կճոյանի գույքն արգելանքի տակ է դրվել: Բանն այն է, որ իրավապահները հարց են բարձրացրել՝ որտեղից հոգեւորականը, որը չի ունեցել եկամուտ, ունի մեծ ծավալների գույք: Հոգեւորականը բացատրել է, որ դա նա՝ որպես հոգեւորական, ստացել է նվիրատվություն, իսկ, ահա, իրավապահները հոգեւորականին բացատրել են, որ եկեղեցին ասում է՝ այդ նվիրատվությունն իրենը չէ, եկեղեցունն է: Սա էլ դեռ քիչ չէ, հիմա էլ շուրջ 2 տարի առաջվա քրեական գործն է դատախազությունը վերաբացել: Գլխավոր դատախազությունը հայտնել էր, որ փողերի լվացման համար մեղադրվող Ս. Կ.-ն (խոսքը Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի մասին է, -խմբ.) կրկին մեղադրյալի կարգավիճակ ունի. վերադաս դատախազը վերացրել է քննիչի՝ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը:

«ՀՀ քաղաքացի Ս. Կ.-ն 2010 թվականի հուլիսի 15-ին ձեռք է բերել Կիպրոսի Հանրապետությունում հիմնադրված «WLISPERA HOLDINGS LIMITED» կազմակերպության բաժնետոմսերը եւ նշված ընկերությունը կառավարելու իրավասությունը հանձնել իր սանիկ, «Զորագյուղ» արտադրական կոոպերատիվի հիմնադիր-տնօրեն Ա. Ս.-ին (խոսքը Աշոտ Սուքիասյանի մասին է -խմբ.)՝ այդպիսով օժանդակելով հանցավոր ճանապարհով ստացված առանձնապես խոշոր չափերով եկամուտներն օրինականացնելուն: Քրեական վարույթով պարզվել է, որ «Զորագյուղ» արտադրական կոոպերատիվի եւ բանկերից մեկի միջեւ կնքված պայմանագրով Ա. Ս.-ն բանկից ստացել է 3 մլրդ 664 մլն 175 հազար դրամին համարժեք 9 մլն ԱՄՆ դոլար եւ 361 մլն 500 հազար դրամի վարկի գումարներ՝ նպատակ չունենալով ստացած վարկային միջոցները հետագայում վերադարձնել:

Խաբեությամբ ձեռք բերված գույքային իրավունքներից ստացված եկամուտներն օրինականացնելու, ծագման աղբյուրը, տեղաշարժն ու պատկանելիությունը թաքցնելու եւ խեղաթյուրելու նպատակով Ա. Ս.-ն կատարել է մի շարք բանկային եւ առեւտրային գործարքներ, մասնավորապես՝ «Զորագյուղ» արտադրական կոոպերատիվի անվամբ բացված դոլարային հաշվից Կիպրոսի Հանրապետության «HELLENIC BANK PUBLIK COMPANY LTD» բանկում բացված, իրեն եւ Ս. Կ.-ին պատկանող «WLISPERA HOLDINGS LIMITED» ընկերությանը փոխանցել է հանցավոր ճանապարհով ստացված առանձնապես խոշոր չափերի՝ 131 մլն 950 հազար դրամին համարժեք 350 հազար ԱՄՆ դոլարի եկամուտ, որին միախառնել է նույն բանկում իրեն պատկանող 2 այլ ընկերության հաշվեհամարներից փոխանցված, հանցավոր նույն եղանակով ստացված գումարները: Փոխարենը տվյալ ընկերությունը «Զորագյուղ» արտադրական կոոպերատիվի դոլարային հաշիվներին փոխանցել է 1 մլն 707 հազար 32,3 ԱՄՆ դոլար: Պարզվում է, որ գործը վերաբացվել է՝ գործարար Փայլակ Հայրապետյանի դիմումի հիման վրա, իսկ գործարարն էլ, ոչ ավել, ոչ պակաս, ԱԺ ՔՊ-ական պատգամավոր Հայկ Սարգսյանի կնոջ հարազատն է: Ի՞նչ է պարզաբանում փաստաբան Արմինե Ֆանյանը, ի՞նչ է սպասվում Կճոյանին:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՏԿՅԱԼՆԵՐ

ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Լիլիթ Կիրակոսյանը 2022 թվականի հունվարի 13-ին վերցրել է պատգամավորական մանդատը: Նախկինում Երեւանի ավագանու անդամը 2022 թավականի հայտարարատու տարում որեւէ սեփական անշարժ գույք չի հայտարարագրել, սակայն հայտարարագրել է բնակարան Երեւանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում, որը փաստացի իրեն չի պատկանում, սակայն շահագործվում է պատգամավորի կողմից:

Կիրակոսյանը տարեսկզբին հայտարարագրել է մեկ մեքենա՝2009 թվականի արտադրության, NISSAN մակնիշի, որը ձեռք է բերվել 2020 թվականին: Տարվա ընթացքում մեքենան օտարվել է Սամվել Տոնոյանին 2 մլն 500 հազար դրամով: Տարվա ընթացքում Կիրակոսյանը ձեռք է բերել HYUNDAI մակնիշի, 2016 թվականի արտադրության մեքենա, որի արժեքը կազմել է 3 մլն 400 հազար դրամ:

Պատգամավորի բանկային հաշիվների մնացորդները կազմել են 420 հազար դրամ, կանխիկ դրամական միջոցները կազմել են 1200 դոլար եւ 4 մլն 700 հազար դրամ: Հաշվետու տարվա եկամուտները կազմում են 12 մլն 136 հազար դրամ, որից 7 մլն 476 հազար դրամն աշխատանքի վարձատրություն է Ազգային Ժողովի աշխատակազմից, 90 հազար դրամը՝ «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ից:

2 մլն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող միանվագ 3 մլն 400 հազար դրամ ծախսեր է հայտարարագրել Կիրակոսյանը: Ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 2 մլն 175 հազար դրամ:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՆԵՐՄՈՒԾՈՒՄՆ ԱՐԳԵԼՎԵԼ Է

Հուլիս ամսին ՍԱՏՄ սահմանային վերահսկողության արդյունքում, լաբորատոր անհամապատասխանության հիմքով, արգելվել է Հայաստանի Հանրապետություն ներմուծել հետեւյալ սննդամթերքը՝

Հնդկաստանից գոմեշի միս՝ 51480 կգ, ախտածին մանրէներ, այդ թվում սալմոնելաներ ցուցանիշով,

Դանիայից թռչնամիս՝26744 կգ, լիստերիա (Listeria monocytogenes) ցուցանիշով,

Ուկրաինայից թռչնամիս՝ 6565 կգ, ախտածին մանրէներ, այդ թվում՝ սալմոնելաներ ցուցանիշով,

Բրազիլիայից խոզի միս՝ 62072,43 կգ, որից 36580 կգ-ը ախտածին մանրէներ, այդ թվում՝ սալմոնելաներ ցուցանիշով, իսկ 25492,43 կգ-ը՝ լիստերիա (Listeria monocytogenes) ցուցանիշով:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 11 ճՏՊ. 3 մարդ զոհվել է, 18-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

Team Telecom

ԿԱՆՑԿԱՑՎԵՆ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԵՐԸ

Աշխարհի 179 քաղաքի ավելի քան 7000 հայ մարզիկ օգոստոսի 5-ից 19-ը կպայքարի լավագույնի կոչման համար. Team Telecom Armenia-ի աջակցությամբ Հայաստանում կանցկացվեն Համահայկական ամառային 8-րդ խաղերը:

Խաղերի օրակարգում ընդգրկված է 19 մարզաձեւ: Մրցաշարերը անց են կացվելու Երեւանում, Շիրակի, Կոտայքի, Արարատի, Արագածոտնի, Գեղարքունիքի եւ Տավուշի մարզերում:

Team Telecom Armenia-ն միացել է 8-րդ խաղերին թիմային սպորտաձեւերի տարածումը եւ զարգացումը երիտասարդների շրջանում խրախուսելու նպատակով:

«Ուրախ ենք հյուրընկալել մեր հայրենակիցներին այստեղ նման մասշտաբային միջոցառման շրջանակում, որը ոչ միայն սպորտի, այլ նաեւ համախմբման ու թիմային հաղթանակների մասին է»,- ասում է ընկերության գլխավոր տնօրեն Հայկ Եսայանը:

Խոսելով Համահայկական խաղերի գաղափարի մասին՝ Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի նախագահ Իշխան Զաքարյանը նշում է, որ 25 տարի առաջ ծնված մարզական տոնի հիմքում համահայկականությունն է, հայկական աշխարհի ամրությունը:

«Համահայկական խաղերն ուղղված են հայկականությանը եւ հայապահպանությանը: Ուզում եմ հատուկ կարեւորել մեր հովանավորներին, բարերարներին, որոնց շնորհիվ է նաեւ, որ խաղերը իրականություն են դառնում»,- հավելում է նա:

Համահայկական խաղերն անցկացվում են օլիմպիական սկզբունքով՝ 4 տարին մեկ անգամ: Առաջին անգամ Համահայկական խաղերն անցկացվել են 1999 թվականին Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդման նպատակով:

Team Telecom Armenia-ն ՀՀ տարածքում տրամադրում է բջջային եւ ֆիքսված ինտերնետի, թվային հեռուստատեսության, բջջային եւ ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ: Ընկերությունը առաջին տելեկոմն է, որ իրականացնում է IPO Հայաստանում՝ դառնալով էլ ավելի բաց ու հանրային: Հանդիսանալով Հայաստանում հեռահաղորդակցության առաջին համակարգի ժառանգորդը՝ Team-ը ժամանակակից տեխնոլոգիաների հետ է համադրում առաջին կապի օպերատորի հարուստ փորձը. 2021 թվականից ընկերությունը սկսել է տարածաշրջանում եզակի՝ 25 Գբ/վ արագությամբ 25G-PON տեխնոլոգիայով NGN (Next Generation Network) ցանցի կառուցումը, որը որակյալ ինտերնետով կապահովի Հայաստանի բոլոր մարզերը:

ԿՐԹԱԿԱՆ

ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐԸ ՀԱՍՏԱՏՎԵԼ ԵՆ

ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը հրապարակել է հանրակրթական հիմնական (ընդհանուր, մասնագիտացված եւ հատուկ) պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2-րդ, 5-րդ, 7-րդ դասա-բաններում 2023-2024 ուսարում ուսումնական գործընթացի կազմա-կերպման ուղեցույցը:



Հաստատությունը ուսպլանի պետական, դպրոցական եւ անհատական բաղադրիչներով սահմանված ժամաքանակի տնօրինմամբ կազմում է տվյալ տարվա իր ուսումնական պլանը:

Վերոնշյալ դասարաններում ուսումնական գործընթացը կազմակերպվում է Հանրակրթության պետական չափորոշչի եւ առարկայական նոր չափորոշիչների ու ծրագրերի պահանջներին համապատասխան:

2-րդ, 5-րդ եւ 7-րդ, ինչպես նաեւ մյուս դասարաններում ուսումնական պարապմունքների սկսվելու, ավարտվելու, ինչպես նաեւ արձակուրդների ժամկետները սահմանվում են «Հանրակրթական հիմնական (ընդհանուր, մասնագիտացված եւ հատուկ) պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2023-2024 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանների» համաձայն:

2023-2024 ուսումնական տարվա 2-րդ, 5-րդ, 7-րդ դասարանների ուսումնական պլանն ունի երեք՝ պետական, դպրոցական եւ անհատական (ընտրովի) բաղադրիչ:

Պետական բաղադրիչը ներառում է, ըստ դասարանների, պետական պարտադիր առարկայացանկը եւ առարկայացանկում ընդգրկված ուսումնական առարկաներին հատկացված պարտադիր նվազագույն ժամաքանակները:

Դպրոցական բաղադրիչի ժամաքանակը հատկացվում է ուսպլանի պետական բաղադրիչով եւ հաստատության կողմից սահմանված առարկաներին: Դպրոցական բաղադրիչի ժամաքանակը հատկացվում է սովորողների նախասիրություններին, հաստատության առանձնահատկություններին, համայնքի կարիքներին համապատասխան կրթություն կազմակերպելու նպատակով: Դպրոցական բաղադրիչի ժամերը հատկացվում են՝ հաշվի առնելով տվյալ դասարանում առարկայի դասավանդման համար պահանջվող տարեկան անհրաժեշտ ժամաքանակը: 2-րդ, 5-րդ, 7-րդ դասարաններում դպրոցական բաղադրիչի ամբողջ ժամաքանակի բաշխումը պարտադիր է:

Անհատական (ընտրովի) բաղադրիչի ժամերը հատկացվում են հաստատության սահմանած ուսումնական խմբակներին եւ ուսումնական նախագծերին՝ համապատասխան կարգի պահանջներին համաձայն: Անհատական բաղադրիչի ժամերը հատկացվում են՝ հաշվի առնելով խմբակի կամ նախագծի իրականացման համար պահանջվող տարեկան ժամաքանակը: Անհատական (ընտրովի) բաղադրիչի ժամաքանակից ժամեր են հատկացվում «Առողջ ապրելակերպ» ուսումնական խմբակին (5-րդ եւ 7-րդ դասարաններ):

Հաստատության 7-րդ դասարանում յուրաքանչյուր սովորող տարեկան իրականացնում է առնվազն մեկ ուսումնական նախագիծ՝ իր ընտրած առարկայից (առարկաներից):

Ուսումնական պլանի անհատական (ընտրովի) բաղադրիչով պարապմունքները կազմակերպվում են պետական եւ դպրոցական բաղադրիչների ժամաքանակի շրջանակում իրականացվող պարապմունք-ներից հետո: Անհատական բաղադրիչի ժամաքանակը հաստատությունը բաշխում է՝ ըստ կրթական աստիճանների, եւ 7-րդ դասարանից սկսած՝ հաշվի առնելով յուրաքանչյուր սովորողի կողմից իրականացվող առնվազն մեկ ուսումնական նախագծի ուղղվածությունն ու բովանդակությունը:

ԿԳՄՍ նախարարությունը հրապարակել է նաեւ Տավուշի մարզի հիմնական (ընդհանուր, մասնագիտացված եւ հատուկ) պետական առարկայական չափորոշիչներ եւ ծրագրեր փորձարկող ուսումնական հաստատությունների 1-12-րդ դասարաններում 2023-2024 ուստարում ուսումնական գործընթացի կազմակերպման վերաբերյալ ուղեցույցը:

ԱՐՑԱԽ

ՋԵԿՈՒՅՑ՝ ՆՈՐ ՓԱՍՏԵՐՈՎ

Ադրբեջանը դիտավորությամբ հոգեկան տառապանքներ է պատճառել հայ զինծառայողների մայրերին, քույրերին եւ նրանց ընտանիքների մյուս անդամներին:

Իրավունքի եւ արդարության կենտրոն «Թաթոյան» հիմնադրամը փաստերով նոր զեկույց է ներկայացրել:

Հայաստանի եւ Արցախի դեմ Ադրբեջանի սանձազերծած 2020թ. 44-օրյա եւ 2022թ. սեպտեմբերի 13-14 պատերազմների ընթացքում ադրբեջանական զինված ուժերը կատարել են բազմաթիվ պատերազմական հանցագործություններ, այդ թվում՝ ռազմագերիների եւ քաղաքացիական անձանց խոշտանգումներ, արտադատական սպանություններ: Դրանց հիմքում այդ երկրի իշխանության հայատյացության եւ թշնամանքի, ֆաշիստական շարունակվող քաղաքականությունն է:

Արհեստական քրեական հետապնդումներով եւ շինծու դատական ակտերով մինչ օրս Ադրբեջանը չի վերադարձնում հայ ռազմագերիներին եւ քաղաքացիական անձանց: Այդկերպ Ադրբեջանի իշխանությունը մտադրված հոգեկան տառապանքներ է պատճառում հայ ընտանիքներին թե՛ Արցախում, թե՛ Հայաստանում:

Այս զեկույցը քննարկում եւ իրավական գնահատական է տալիս ադրբեջանական այդ հանցավոր արարքներին: Օրինակ՝ ադրբեջանական զինծառայողները խոչընդոտել են որոնողական աշխատանքներին, թաքցվել եւ չեն վերադարձվել զինծառայողների մարմիններ եւ այլն:

«Facebook», «Twitter», «TikTok» եւ այլ սոցիալական ցանցերում ադրբեջանական օգտահաշիվներով, թիրախավորելով հայկական լսարանը, տարածվել եւ անմիջապես ընտանիքներին են ուղարկվել իրենց ընտանիքների զինծառայող անդամների լուսանկարները սպանված եւ խոշտանգված վիճակում:

Ուսումնասիրությունները հաստատում են, որ նշված հանցանքները խրախուսվում են Ադրբեջանի իշխանությունների կողմից: Դրանք նպատակ ունեն ծանր հոգեբանական ցավ պատճառել ընտանիքներին եւ պահպանել լարվածությունը հայ հասարակությունում:

Սույն զեկույցի մշակման աշխատանքները ներառել են նաեւ հարցազրույցներ զինծառայողների ընտանիքների հետ եւ անհրաժեշտ փաստաթղթերի ուսումնասիրություններ:

ՀԱՅԻ ԽՆԴԻՐԸ ԿԿԱՐԳԱՎՈՐՎԻ

Ստեփանակերտի, Ասկերանի, Մարտունու ալրաղացներում շուրջօրյա աշխատանք է տարվում ալյուրի եւ հացի պահանջարկն ապահովելու ուղղությամբ, իսկ Մարտակերտի ալրաղացը մեծ դժվարություններով կգործարկվի. հայտնում են Արցախի գյուղի եւ գյուղատնտեսության աջակցության հիմնադրամից:

«Ստեփանակերտի հացի արտադրամասերում հերթերը կառավարելու եւ ձեռք բերվող հացի քանակը վերահսկելու համար պետնախարարի հանձնարարությամբ տեղում ներկա են գտնվելու Արցախի պետական եկամուտների կոմիտեի ու պետական տեսչությունների կառավարման կոմիտեի աշխատակիցները: Իրականացվող արտակարգ միջոցառումների արդյունքում երկու օրից աստիճանաբար կկարգավորվի հացի սղության խնդիրը:

Խնդրում ենք ըմբռնումով մոտենալ իրավիճակին եւ հնարավորինս խնայողաբար կատարել հացի գնումները»,- ասված է հաղորդագրության մեջ:

● *«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:*

ՀԵՏԱՔՐՔԻՐ

ՀԱՄԱԺՈՂՈՎԸ ԿԼԻՆԻ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Ականավոր գիտնականներն ու գործարարները մեկ հարթակում «Գիտության եւ գործարարության օրեր 2023» միջոցառման շրջանակում կհամախմբվեն՝ խթանելու համար բիզնեսի եւ գիտության փոխգործակցության զարգացումը, գիտության առեւտրայնացման հնարավորությունների բացահայտումը՝ ի նպաստ Հայաստանի տնտեսության հետագա առաջընթացի:

Միջոցառումը կանցկացվի դեկտեմբերի 1-2-ը Երեւանի Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում, որի շրջանակում Հայաստան կժամանի հայտնի գիտնական, գրող եւ փիլիսոփա Նասիմ Նիկոլաս Թալեբը:

Միջոցառումը կազմակերպվում է ՀՀ էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանի նախաձեռնությամբ՝ համախմբելով գիտնականների, հետազոտողների, գործարարների եւ ներդրողների Հայաստանից եւ ամբողջ աշխարհից:

Վահան Քերոբյանը միջոցառմանը նվիրված ասուլիսում ուրախությամբ նշեց, որ արդեն երկրորդ անգամ է իրականացվում «Գիտության եւ գործարարության օրեր» համաժողովը՝ վստահեցնելով, որ ոչ մի ջանք չեն խնայելու, որ այն դառնա մի հարթակ, որը կմիավորի գիտության եւ բիզնեսի աշխարհները՝ խթանելով նորարարությունը, համագործակցությունը եւ առաջընթացը: ««Գիտության եւ գործարարության օրեր 2022» առաջին համաժողովին ներկա էին ավելի քան 1000 մասնակիցներ, որոնց թվում էին գլխավոր հյուր եւ բանախոս, Նոբելյան դափնեկիր Արդեմ Փաթափությանը, հայտնի աստղաֆիզիկոս Գարիկ Իսրայելյանը, Նյու Յորքի համալսարանի պրոֆեսոր Գեորգի Դերլուգյանը եւ այլք: Համաժողովի շնորհիվ հայ հանրությունը հնարավորություն ունեցավ ծանոթանալու նրանց անցած ճանապարհին եւ գրանցած հաջողություններին անմիջապես իրենցից»,- ասաց Քերոբյանը:

ՀՀ էկոնոմիկայի նախարարն ընդգծեց, որ միջոցառման այս տարվա հիմնական բանախոս Նասիմ Նիկոլաս Թալեբը հայտնի գիտնական, գրող եւ փիլիսոփա է: Նրա բեսթսելերները՝ «Սեւ կարապը» եւ «Հակափխրունությունը», շարունակում են խորը ազդեցություն ունենալ գիտության եւ գործարարության ոլորտների վրա: Նասիմ Նիկոլաս Թալեբը լայնորեն ընկալվում է որպես փայլուն եւ ոչ ավանդական մտածող, որը մարտահրավերներ է նետում պայմանական իմաստությանը եւ խրախուսում մարդկանց մտածել շրջանակներից դուրս:

«Գիտությունը սոսկ ուսումնասիրության առարկա չէ. այն առաջընթացի, նորարարության եւ լուսավորության գլխավոր գործոններից մեկն է, որը մարդկությանը հասցրել է մեծ բարձունքների: Գիտական հայտնագործությունների միջոցով մենք ավելի խորը ըմբռնում ենք ձեռք բերել տիեզերքի մասին, բացահայտել կյանքի առեղծվածները եւ մշակել նոր տեխնոլոգիաներ, որոնք եղել են բեկումնային եւ հեղափոխել են մեր կյանքի բոլոր ոլորտները:

Մենք ունենք ավելի քան 4000 գիտնական, եւ մեր նպատակը պետք է լինի նրանց աշխատանքի արդյունքը բերել մեր առօրյա, ներդնել այն ապրանքարտադրության եւ ծառայության ոլորտներում, դարձնել հանրության համար հասանելի: Պետք է հասնենք այն մակարդակին, երբ երիտասարդությունը կսկսի ավելի մեծ հետաքրքրություն ցուցաբերել գիտության նկատմամբ, եւ գիտությամբ զբաղվելը կդառնա ավելի հրապուրիչ եւ հեռանկարային»,- նշեց Վահան Քերոբյանը:

Նա ընդգծեց, որ այս համաժողովի միջոցով նպատակ ունեն կամրջել ակադեմիական գիտելիքն ու գործարար միջավայրի ժամանակակից պահանջները՝ հզորացնելով Հայաստանի արտադրական ներուժը եւ դրանով իսկ խթանել պետության տնտեսական աճը: Ըստ նախարարի՝ գիտելիքահեն նախագծերը մնայուն արժեք են պետության համար, եւ հաջողությամբ առեւտրայնացնելու պարագայում դրանք կարող են դառնալ Հայաստանի կարեւոր այցեքարտերից մեկը:

Հայտնի գիտնական, գրող եւ փիլիսոփա Նասիմ Նիկոլաս Թալեբը տեսակապով ողջունեց բոլորին եւ նշեց, որ անհամբերությամբ սպասում է Հայաստան ժամանելուն:

ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ

ՖԻԼՄԸ՝ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԿԻՆՈԹԱՏՐՈՆՈՒՄ

Ռեժիսոր Կարեն Զախարովն օգոստոսի 1-ին Երեւանում՝ «Մոսկվա» կինոթատրոնում, ցուցադրեց «Բաբա Յագան փրկում է աշխարհը» ֆիլմը: Այն նկարահանել է «Արտեկ. մեծ ճանապարհորդություն» ֆիլմի ստեղծագործական խումբը:

Կինոնկարը հուզիչ արկած է ամբողջ ընտանիքի համար:

Պրոդյուսեր Քրիստինա Առուստամովան ուրախությամբ փաստեց, որ շատերը եկել են պրեմիերայի իրենց երեխաների հետ: «Շատ կարճ ժամանակահատվածում նման արձագանք եղավ ֆիլմի մասին, ինչի առթիվ անչափ ուրախ ենք: Մեծ պատասխանատվություն է ֆիլմն այստեղ ներկայացնել: Սա ընտանեկան կինոնկար է, եւ ուրախ ենք, որ ընտանիքներով եք եկել»,-նշեց նա:

Ռեժիսոր, սցենարիստ, կրեատիվ պրոդյուսեր Արա Օգանիսյանը, որը Երեւանում էր հատուկ պրեմիերայի համար, ֆիլմի ցուցադրությունից առաջ նշեց. «Ինձ համար շատ հուզումնալից պահ է, քանի որ 23 տարի կինոարտադրության ոլորտում եմ, բայց ոչ մի անգամ Հայաստանում չեմ ներկայացրել աշխատանքներս: Երեկ Մոսկվայում եղավ ֆիլմի ցուցադրությունը. ուրախ եմ, որ այսօր պրեմիերան Հայաստանում է: Ես հույս ունեմ, որ այն դուր կգա հանդիսատեսին»:

Կինոարվեստի երկրպագուները «Բաբա Յագան փրկում է աշխարհը» ֆիլմը հայաստանյան կինոթատրոններում դիտելու հնարավորություն կունենան օգոստոսի 3-ից:

Հետաքրքրասեր դպրոցական Սենկան հրաշքով հայտնվում է առասպելական հնագույն անտառում: Այն թաքնված է մարդկանց աչքերից Բաբա Յագայի հզոր հմայքով: Անտառում ակնհայտ ինչ-որ բան այն չէ: Տագնապի ազդանշաններն ազդարարում են, որ կախարդանքն այլեւս չի գործում, եւ չար մոգության եւ վաղուց պարտված թշնամիների արթնանալը միայն ժամանակի հարց է:

Կրկին կախարդանք սփռելու համար Յագան ստիպված է մեկնել ժամանակակից քաղաք՝ փնտրելու կախարդների ամենահզոր զենքը՝ սքանչելի ծաղիկը: Այնտեղ նա կհանդիպի ժամանակակից աշխարհի շատ տարօրինակությունների: Միեւնույն ժամանակ արդեն հազար տարի մութ բանտում թաքնված է վրեժի ծարավ Կոշչեյ Անմահը: Հենց Յագան է օգնել նրան հաղթել շատ դարեր առաջ: Սենկան մտել է հեքիաթի մեջ, բայց կկարողանա՞ արդյոք փախչել այդտեղից, կկարողանա՞ օգնել փրկել մեր աշխարհը, եւ ո՞ւմ կողմից է նա պայքարելու՝ բարո՞ւ, թե՞ չարի, ամենակարող Կոշչեյի՞, թե՞ խորամանկ Յագայի կողմից:

Ֆիլմի սցենարի հեղինակներն են Յուրի Նեսեւին, Եվգենի Վիխարեւը, պրոդյուսերներ՝ Արմեն Անանիկյան, Ալեքսանդր Մորոզով, Արա Օգանեսյան, օպերատորներ՝ Վլադիմիր Զվեզդոչկին, Օլեգ Եֆրեմով, կոմպոզիտոր՝ Իգոր Բաբաեւ:

Դերերում՝ Լյուդմիլա Արտեմեւա, Յան Յապնիկ, Գլաֆիրա Տարխանովա, Օլեսյա Ժելեզնյակ, Գրիգորի Սիյատվինդա, Մարատ Բաշարով, Ալեքսեյ Դմիտրիեւ, Ալեքսանդր Իլյին, Սավելի Կուդրյաշով, Օլգա Նաումենկո եւ այլք:

ՍՊՈՐՏԱՅԻՆ

ՀԱՂԹԵՑ ՄՈԼԴՈՎԱՅԻՆ

Հայաստանի բասկետբոլի կանանց Մ18 տարեկանների հավաքականը սկսեց իր ելույթները Եվրոպայի առաջնության C դիվիզիոնի B ենթախմբում:

Առաջին խաղում Հայաստանի հավաքականը 75-45 հաշվով հաղթեց Մոլդովայի հավաքականին: Հանդիպման ամենաարդյունավետ խաղացողը Անի Մկրտչյանն էր՝ վաստակած 22 միավորով: Նա նաեւ 6 անգամ տիրել է օղակից անդրադարձող գնդակին: Հայաստանի հավաքականը երկրորդ հանդիպումը կանցկացնի օգոստոսի 2-ին՝ մրցելով Կոսովոյի հետ:

ՑԱՎՈՏ ՀԵՌԱՑՈՒՄ

Գերմանիայի չեմպիոն Մյունխենի «Բավարիայի» գերմանացի գլխավոր մարզիչ Թոմաս Տուխելը մեկնաբանել է 31-ամյա սենեգալցի հարձակվող Սադիո Մանեի տեղափոխությունը իր ղեկավարած թիմից Սաուդյան Արաբիայի «Ալ Նասր»:

«Երբեմն ամեն ինչ ընթանում է ոչ այնպես, ինչպես պատկերացնում ես: Ես լիովին հասկանում եմ, որ հրաժեշտը նրան ցավ է պատճառում: Երկուսս էլ ընդունեցինք այս իրավիճակը եւ տեղի ունեցողը: Լավ չէ, բայց ստեղծված իրավիճակի բոլոր մասնակիցների համար լավագույն լուծումն էր»,- Տուխելի խոսքը մեջբերում է FCB Inside-ը:

Ավելի վաղ հայտնի էր դարձել, որ «Ալ Նասրը» Մանեի տրանսֆերի համար կվճարի 40 միլիոն եվրո: Ֆուտբոլիստը կստանա տարեկան 40 միլիոն եվրո:

Մանեն անցած ամռանն էր անգլիական «Լիվերպուլից» 32 միլիոն եվրոյի դիմաց տեղափոխվել «Բավարիա», որի կազմում մասնակցեց 38 հանդիպման, խփեց 12 գոլ, կատարեց 6 գոլային փոխանցում:

ՀԱՄԱԼՐՈՒՄ՝ «ՆՈԱ»-ՈՒՄ

Երեւանի «Նոա» ֆուտբոլային ակումբը շարունակում է համալրել կազմը:

Այս մասին հայտնում է ակումբի մամուլի ծառայությունը:

«Նոա»-ն պայմանագիր է կնքել 33-ամյա սերբ պաշտպան Ալեքսանդր Միլկովիչի հետ: Ֆուտբոլիստը Բելգրադի «Պարտիզանի» սան է, որի կազմում նա 4 անգամ դարձել է Սերբիայի չեմպիոն եւ կրկնակի գավաթակիր: Իր կարիերայի ընթացքում Ալեքսանդրը խաղացել է տարբեր ակումբներում, այդ թվում՝ «Բրագա»-ում, խորվաթական «Սպլիտ»-ում, Պերմի «Ամկարո»-ում, լեհական «Միեդժ Լեգնիցա»-ում, «Ալաշկերտ»-ում: Միլկովիչը հրավիրվել է Սերբիայի Մ-19 եւ Մ-21 հավաքական: 2022/23թթ. մրցաշրջանում սերբ պաշտպանը հանդես է եկել «Փյունիկ»-ում՝ Հայաստանի բազմակի չեմպիոնի կազմում, ՈՒԵՖԱ-ի Կոնֆերենցիաների լիգայի խմբային փուլում մասնակցել է 5 խաղի, իսկ ընթացիկ մրցաշրջանում 3 հանդիպում անցկացրել Կոնֆերենցիաների լիգայի որակավորման փուլում: Թիմին է միացել նաեւ 19-ամյա իսրայելցի պաշտպան Ահմադ Սվիթին: Ֆուտբոլիստը իր կարիերան սկսել է «Քֆար Յասիֆ»-ում, նրա վերջին ակումբը եղել է Հապոելի «Կիրյաթ Շմոնա» երիտասարդական թիմը:

● *Օգոստոսի 6-ին Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում տեղի կունենա Հովհաննես Դավթյանի «Խմորումներ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 4000-8000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Ո՞վ կարող է դիմել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին:

Նարինե Հախվերդյան (44 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Պաշտպանին կարող է դիմել ցանկացած անձ՝ անկախ ազգությունից, քաղաքացիությունից, բնակության վայրից, սեռից, ռասայից, տարիքից, քաղաքական եւ այլ հայացքներից, այդ թվում նաեւ՝

1. փախստականները, կանայք, երեխաները,
2. ձերբակալում, նախնական կալանք կամ քրեական պատիժ իրականացնող հիմնարկներում, ինչպես նաեւ հարկադրական պահման այլ վայրերում գտնվող անձինք,
3. զինապարտները, զինծառայողները, նրանց հավասարեցված անձինք,
4. իրավաբանական անձինք,
5. խնամակալության եւ հոգաբարձության մարմինները,
6. պաշտոնատար անձինք, միայն իրենց՝ որպես ֆիզիկական անձանց խախտված իրավունքների պաշտպանության նպատակով:

ՀՀ ՄԻՊ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ուրիշի իրավունքների պաշտպանության նպատակով Պաշտպանին կարող են դիմել միայն այդ անձանց ներկայացուցիչները, ինչպես նաեւ մահացած անձանց ընտանիքների անդամներն ու ժառանգները:

ՎԻԶԱ

ՀԱՐՑ. Կարո՞ղ եմ Գերմանիայի դեսպանությունից ստացած Շենգենյան վիզայով այցելել նաեւ շենգենյան այլ պետություններ:

Վան Դավթյան (29 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո՛. հենց սա է Շենգենյան վիզայի իմաստը: Դուք կարող եք վիզայի վավերականության ժամկետում այցելել շենգենյան ցանկացած երկիր: Բայց այցելության հիմնական նպատակակետը (ամենաերկար կացությունը) պետք է լինի այն երկրում, որի դեսպանությունից Դուք վիզան ստացել եք:

ԳԴՀ դեսպանություն Երեւանում

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Պետք է նկատի ունենալ, որ միայն վիզա ունենալը ինքնաբերաբար մուտքի իրավունք չի տալիս, եւ որ վիզա ունեցող անձը սահմանին պետք է փաստաթղթերով հավաստի, որ բավարարում է Շենգենյան սահմանային կոդեքսի 6-րդ հոդվածով նախատեսված մուտքի նախապայմանները:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

ՊԵԿ արեւելյան-մաքսատուն վարչության Բագրատաշենի մաքսային կետ-բաժնի ծառայողները կանխել են խոշոր քանակությամբ չհայտարարագրված հագուստի տեղափոխումը: Օրերս մաքսակետ ժամանած բեռնատարը, որը վարել է ՀՀ քաղաքացի Գ.Ս.-ն, տեղափոխել է ՌԴ «Վերին Լարս» անցակետում լրացված տարանցման հայտարարագրով ձեւակերպված ապրանքներ: Մաքսային ծառայողների կողմից իրականացրած հսկողության արդյունքում պարզվել է, որ բեռնատարի մեջ առկա են չհայտարարագրված ապրանքներ, մասնավորաբար՝ 2330 կգ ընդհանուր քաշով նոր հագուստ, որի արժեքը, ըստ հուլիսի 27-ին կազմված համապատասխան հայտարարագրի, կազմել է 2 միլիոն 542 հազար ՌԴ ռուբլի՝ շուրջ 11 միլիոն դրամ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+11 + 15 +27 + 31
Կոտայքի լեռներ	+11 + 14 +26 + 29
Կոտայքի նախալեռներ	+20 + 22 +33 + 35
Գեղարքունիք	+11 + 16 +25 + 28
Լոռի	+12 + 16 +24 + 28
Տավուշ	+16 + 20 +28 + 32
Արագածոտնի լեռներ	+10 + 13 +24 + 27
Արագածոտնի նախալեռներ	+20 + 22 +32 + 37

Արարատ	+21 + 23 +37 + 39
Արմավիր	+19 + 20 +37 + 39
Վայոց ձորի լեռներ	+13 + 15 +25 + 27
Վայոց ձորի նախալեռներ	+20 + 22 +37 + 39
Սյունիքի հովիտներ	+19 + 23 +34 + 38
Սյունիքի նախալեռներ	+15 + 17 +28 + 30
ԼՂՀ	+19 + 21 +32 + 36
Երեւան	+20 + 22 +36 + 38

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **2.8.2023**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*